

Այդի Բանկի հաշվարկային տոկոսադրույք (ԱԲՀՏ)

Ուժի մեջ է մտնում 01/01/2021թ.

Արժույթ	ԱԲՀՏ	Ուժի մեջ է մինչև
ՀՀ դրամ	10.1%	01/07/21
ԱՄՆ դոլար	4.1%	01/07/21
Եվրո	2.4%	01/07/21

Գլուխ 2. ԱԲՀՏ-ի հաշվարկման կարգը և բաղադրիչները ըստ արժույթների

- ԱԲՀՏ-ի հիման վրա կարող են սահմանվել Բանկի սեփական ռեսուրսներով ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով տրամադրվող վարկերի համար բազիսային տոկոսադրույքներ:
- ՀՀ դրամի, ԱՄՆ դոլարի համար հաշվարկվող **ԱԲՀՏ՝**

$$\text{ԱԲՀՏ} = \text{ՄԿՏ}$$

Որտեղ՝

- ՄԿՏ** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «մեկ տարուց ավելի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքն է համապատասխան արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:
«ՄԿՏ» հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի **«Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում**
(<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>):
- Եվրոյի համար հաշվարկվող **ԱԲՀՏ՝**

$$\text{ԱԲՀՏ} = \text{ԵՄՏ}$$

Որտեղ՝

- ԵՄՏ** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «մեկից հինգ տարի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքն է Եվրո արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:
«ԵՄՏ» հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի **«Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում**
(<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>):

Գլուխ 3. ԱԲՀՏ-ի սահմանումը և կիրառումը

- ԱԲՀՏ-ն Բանկի կողմից սահմանվում է տարեկան երկու անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին՝ հիմք ընդունելով ՀՀ Կենտրոնական բանկի և Եվրոպական կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ ամսվան նախորդող ամենաթարմ համապատասխան տոկոսադրույքները:
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «մեկ տարուց ավելի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքը 6 ամսվա

ընթացքում չհրապարակելու դեպքում ՀՀ դրամի և ԱՄՆ դոլարի համար ԱԲՀՏ-ի հաշվարկը կկատարվի հետևյալ կերպ.

$$\text{ԱԲՀՏ} = \text{ՄԿՏ}^* + \text{Ճշգրտող գործակից}$$

Որտեղ՝

- **ՄԿՏ*** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «181 օրից մինչև 1 տարի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքն է համապատասխան արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:
«ՄԿՏ*» հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի **«Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում** (<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>)
 - **Ճշգրտող գործակից** – այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածի դրությամբ « $\text{ՄԿՏ}_{n-m} - \text{ՄԿՏ}_{n-m}^*$ » մեծություն, որտեղ՝
 - ✓ **n-ը**՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին է,
 - ✓ **m-ը**՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածն է, որի ժամանակ հրապարակվել են վերոնշյալ տոկոսադրույքները,
 - Ի դեպ Ճշգրտող գործակիցը հաշվարկվում է միայն այլընտրանքային լողացող տոկոսադրույքին անցնելու պահին և ֆիքսվում որպես հաստատուն մեծություն՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի կիրառման ընթացքում:
6. ՀՀ կենտրոնական բանկի կողմից **Եվրո արժույթով** տոկոսադրույքը 6 ամսվա ընթացքում չհրապարակելու դեպքում Եվրոյի համար ԱԲՀՏ-ի հաշվարկը կկատարվի հետևյալ կերպ.

$$\text{ԱԲՀՏ} = \text{ԵՄՏ}^* + \text{Ճշգրտող գործակից}$$

Որտեղ՝

- **ԵՄՏ*** - հաշվարկվում է հետևյալ կերպ՝ 50% ESTR կամ €STR (euro short-term rate) + 50% ԱՄՆ դոլարի համար հաշվարկվող ԱԲՀՏ
 - **ESTR կամ €STR** – Եվրոպական կենտրոնական բանկի կողմից հրապարակվող Եվրոյով օվերնայթի փաստացի տոկոսադրույքն է, որն իրենից ներկայացնում է միջազգային շուկայում Եվրոյով օվերնայթների փաստացի գործարքների միջին կշռված տոկոսադրույքը՝ կլորացվում է ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:
 - «**ESTR**» հրապարակվում է Եվրոպական կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի **«Ֆինանսական շուկաներ և տոկոսադրույքներ» բաժնում**:
(www.ecb.europa.eu/stats/financial_markets_and_interest_rates/euro_short-term_rate/html/index.en.html):
 - **Ճշգրտող գործակից** – այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածի դրությամբ « $\text{ԵՄՏ}_{n-m} - \text{ԵՄՏ}_{n-m}^*$ » մեծություն, որտեղ՝
 - ✓ **n-ը**՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին է,
 - ✓ **m-ը**՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածն է, որի ժամանակ հրապարակվել են վերոնշյալ տոկոսադրույքները,
 - Ի դեպ Ճշգրտող գործակիցը հաշվարկվում է միայն այլընտրանքային լողացող տոկոսադրույքին անցնելու պահին և ֆիքսվում որպես հաստատուն մեծություն՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի կիրառման ընթացքում:
7. ԱԲՀՏ-ն փոփոխվում է այն դեպքում, եթե ԱԲՀՏ հիմքում ընկած տոկոսադրույքը՝ Բանկի կողմից հրապարակած նախորդ ԱԲՀՏ ցուցանիշի հիմքում դրված տոկոսադրույքի համեմատ փոփոխվել է 1% և ավելի տոկոսային կետով՝ ՀՀ դրամի համար ու 0.5% և ավելի տոկոսային կետով՝ ԱՄՆ դոլարի և Եվրոյի համար: